ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

26.08.2015թ.
258-ի 3

ՀՀ ոստիկանության պետ
պարոն Վլադիմիր Գասպարյանին

Տեղեկատվություն սանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Գասպարյան,

2015թ.-ի օգոստոսի 8-ին տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էինք ՀՀ ոստիկանությանը՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ի՞նչ միջոցներով (բյուջետային, արտաբյուջետային կամ այլ) են գնվել լրագրողական տեխնիկայի սարքավորումները, որոնք որպես փոխհատուցում տրվել են Ազատություն ռադիոկայանի՝ 2015թ.-ի հունիսի 23-ի ժամանակ Բաղրամյան պողոտայում տուժած լրագրողներին,
2. Հարուցված ո՞ր քրեական կամ վարչական կամ կարգապահական վարույթի շրջանակներում է որոշում կայացվել գնել այդ լրագրողական տեխնիկան եւ տալ լրագրողներին, խնդրում ենք տրամադրել այդ որոշման (որոշումների) պատճեն,
3. Որքա՞ն գումար է ծախսվել փոխհատուցման նպատակով լրագրողական տեխնիկայի սարքավորումներ գնելու համար:

ՀՀ ոստիկանությունից ստացել ենք պատասխան, սակայն պատասխանում նշված չէ 1-ին հարցի պատասխանը, այլ նշված է՝ ոստիկանության միջոցների հաշվին:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք հստակեցնել, թե ՀՀ ոստիկանության բյուջետայի՞ն, արտաբյուջետայի՞ն, թե այլ (խնդրում ենք նշել, թե ինչ) միջոցներով են գնվել լրագրողական տեխնիկայի սարքավորումները, որոնք որպես փոխհատուցում տրվել են Ազատություն ռադիոկայանի՝ 2015թ.-ի հունիսի 23-ի ժամանակ Բաղրամյան պողոտայում տուժած լրագրողներին:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան